9(4Ռ.9.25)
Z.P.
1
258-42

ԱՐԱՐԱՏ

ԹԻՒ Ա. — ՇՐՋԱՆ Ի. 1887 ՏԱՐԻ Ի. ՅՈՒՆՎԱՐ 31։

617

ԱՐԱՐԱՏԻ 20-ՐԴ ՇՐՋԱՆԸ.

19 տարի է՛ր որ Արարատը հրատարակվումէ և խմբագրութիւնը ի նկատի ունելով որ իւր ընթերցողները սակաւ բացառութեամբ միայն քահանաներն են, տալիս էր իւր ընթերցողների մեծամասնութեան կոչմանը պատշաճ ընթերցանութեան նիւթ։

Երբ Արարատը սկսեց հրատարակուել բացի միաբանութիւնից, գրողների մի ընտիր խումբ սկսեցին մասնակցել Արարատին տալով յատկապէս մանկավարժական և բանասիրական յօդուածներ։ Այս ընտիր խումբ կազմողներն էին ուսանողները, որոնք տեսնելով դպրոցական գործի վերածնումն և նորա՝ Հայոց մէջ կանոնաւոր զարգացման անհրաժեշտութիւնը, ձգտումէին Եւրոպայի լուսաւորութեան արդիւնքը մանկավարժութեան վերաբերութեամբ նշուլել և հայ հոգևոր դպրոցների համակարգութեան մէջ։

Եղաւ ժամանակ, որ Արարատը բացի մասնաւոր թղթակցութիւններից մնաց միմիայն միաբանութեան գրաւոր գործունէութեան ասպարէզ և յայտնի գրիչն էր Հանգուցեալ ի Տէր Աբէլ Արքեպիսկոպոս, որ իւր հնախօսական, պատմական և կրօնական գրուածներով զարդարումէր Արարատի էջերը. սորանից մօտ 10 տարի առաջ, 1876 թուի վերջերին Աբէլ Արքեպիսկոպոս

վախճանուեց և Արարատը զրկուեց իւր բազմահմուտ աշխատակցից։ Արարատի խմբագրութիւնը գեռ երկար ժամանակ կաւաղէ այդ կորուստը հանգիստ և երկնից արքայութիւն մաղթելով հանգուցեալին։

Այո՛, եղաւ ժամանակ, որ Արարատը փոքր ինչ շեղուեց իւր նպատակից, և տեղի տուեց թարգմանական և ինքնուրոյն այնպիսի գրուածների, որոնք մինչև անգամ պատշաճաւորութեան սահմանից դուրս էին, բայց այդ ժամանակը կարի սուղ եղաւ։

Այժմ թեւակոխելով 20-րդ շրջանը, և աչքի առաջ ունենալով նախանցեալ 19 տարիների փորձը, Արարատի խմբագրութիւնը խոստանում է, առաջնորդ ունենալով կրօնական ուղղութիւնը, տալ իւր ընթերցողներին պատմական, բանաստեղծական և ազգային այնպիսի յօդուածներ, որոնք պատշաճ լինին ընթերցողների մեծամտութեան կշռմանը և զարգացմանը։

Արարատը խմբագրուելով միաբանութեան միահամուռ մտադրութեամբ, յոյս ունի իւր էջերը զարդարել այնպիսի գրողների պատուական եռեպատիրութիւններով, որպիսին չեն խնայիլ նոքա Արարատի հրատարակութեան օրից։

Արարատի հրատարակութեան գործում պարծանքով պիտի յիշուի Գեր Տ. Գրիգոր Եպիսկոպոս Աղասիրեան որ 1878 թուից հետէ, համարեա՛ անընդհատ մատակարում է Արարատին իւր պատուական և ընտիր թարգմանութիւններով, որոնք բազմահմուտ թարգմանչի գրչի տակից դուրս են գալիս որպէս ինքնատիպ և ինքնուրոյն մի գործ։

Աչքի առաջ ունենալով աշխատակիցների մի պատկառելի խումբ, որի մէջ որոշ տեղ է բռնում Կարնոյ Եպիսկոպոս Գեր. Տ. Մաղաքիա Օրմանեան, Արարատի խմբագրութիւնը յոյս ունի, որ 20-րդ շրջանում և այնուհետև, աւելի ևս հետաքրքիր և պիտանի դարձնէ Արարատը ազգի ամեն դասակարգերի մէջ։

Արարատի խմբագրութիւնը իւրաքանչիւրում ազգին նոր տարի և հրաշափառ Ծնունդ ու Աստուածայայտնութիւն Քրիստոսի մաղթելով բարօրութիւն և երջանկութիւն բոլորին։

ՀՍՍՌ ԱԲՄ. ԿԿ 1280-54